Ի շնորհիվ նրան, որ Կենտրոնում տեղադրված սարքավորումները լավագույնն են և եզակի ամբողջ տարածաշրջանում, վերջիններս տալիս են բացառիկ պատկեր թե՛ ուլտրաձայնային հետազոտությունների, թե՛ գինեկոլոգիայի, թե՛ որովայնի խոռոչի, թե՛ վահանձև գեղձի, անոթների ու հոդերի, միզասեռական համակարգի և նույնիսկ թոքերի ախտորոշման ընթացքում: Այս ամենը առավել կարևոր է, երբ մասնագետները նույնպես փորձառու են և բանիմաց:










Կենտրոնը հագեցված է նաև թվային ռենտգենով, որը իրականացվում է ստացիոնար թվային գերիստակ համակարգչային ռենտգեն սարքավորման միջոցով:

Ներկա համավարակի շրջանում նշված ռենտգեն պատկերը մեզ տալիս է իսկայական առավելություններ՝ տեսնել նույնիսկ ամենափոքր փոփոխությունները թոքային հյուսվածքներում:

Ծավալուն լաբորատոր ծառայությունը ներառում է ավելի քան 300 հետազոտություն: Լաբորատոր սարքավորումները և ռեագենտները հատուկ ներկրվում են Գերմանիայի Դաշնության հանրահայտ արտադրողից: Կենտրոնում նաև իրականացվում են մանրէաբանական հետազոտություններ:




“ԱՋԱՓՆՅԱԿ” Բժշկական Կենտրոնում մասնագետները և անձնակազմը տիրապետում են տարբեր օտար լեզուների, քանի որ Կենտրոնը ունի միջազգային ճանաչում և ընդունում է բազմաթիվ օտարերկրյա այցելուներ:

Կենտրոնում աշխատում են բարձր որակավորում ունեցող 40-ից ավել մասնագետներ 21 տարբեր նեղ թերապևտիկ, վիրաբուժական և ախտորոշիչ մասնագիտություններով:

Կենտրոնում գործող գերժամանակակից վիրաբուժական բաժանմունքում վիրահատությունները կատարվում են Հայաստանի լավագույն մասնագետների կողմից, իսկ ծառայությունների աշխատանքը համակարգվում է անմիջապես **Կենտրոնի տնօրեն՝ բժշկական գիտությունների թեկնածու, Գրիգորի Մանուկյանի կողմից**, ով իր վիրաբուժության մեծ փորձը կուտակել է Գերմանիայի Դաշնության առաջատար կենտրոններում երկարատև տարիների աշխատանքի ընթացքում: Կենտրոնում վիրահատությունները բոլոր ոլորտներում կարող են իրականացվել **սոցփաթեթի, պետպատվերի** և Կենտրոնի հետ համագործակցող բոլոր **ապահովագրական ընկերությունների** հետ:







Վիրաբուժական բաժանմունքի պայմանները չափազանց հարմարավետ են, իսկ հիվանդասենյակները ավելի նման են բարձրակարգ հյուրանոցային համարներին, որտեղ մեր պացիենտներին մատուցվում է սնունդ, տրամադրվում է անվճար ինտերնետ կապ, հեռուստացույց, անհատական հագուստ, հիգիենայի պարագաներ և շատ տարբեր մանրուքներ, որոնք դարձնում են հիվանդանոցում գտնվելն ավելի հաճելի և հարմարավետ:

Մանրամասն տեղեկատվություն ստանալու համար մենք առաջարկում ենք այցելել Կենտրոն կամ զանգահարել ստորև նշված հեռախոսահամարներով:
Ձեր հարմարավետության համար գործում է նաև թեժ հեռախոսահամար **(+37499) 38-00-44**, ինչպես նաև կարող եք գրել մեր Ֆեյսբուքյան կամ Ինստագրամյան էջերին:
Մեր պաշտոնական կայքն է՝ **www.ajapnyakmc.com**









## «ԱՋԱՓՆՅԱԿ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բժշկական Կենտրոնը հանդիսանում է ժամանակակից և առաջատար բժշկական հաստատություն, որտեղ մատուցվում են որակյալ բժշկական ծառայություններ թերապևտիկ, վիրաբուժական և ախտորոշիչ ոլորտներում: Կենտրոնը հայտնի է իր բարի համբավ վայելող մասնագետներով և տեխնիկական բարձրակարգ հագեցվածությամբ և՛ Հայաստանում, և՛ արտերկրում, որտեղից հարյուրավոր մարդիկ այցելում և ստանում են Եվրոպական ստանդարտներին համապատասխան բժշկական ծառայություններ:

**“ԱՋԱՓՆՅԱԿ”Բժշկական Կենտրոնը** գտնվում է Երևան քաղաքում: Բժշկական Կենտրոնը առաջին անգամ իր դռները բացեց 2019 թվականին: Կենտրոնի շինարարությունը հիմքից տևել է 7 տարի, այն կառուցվել է ժամանակակից գերմանական հիվանդանոցաշինության հիմքերի վրա: Վերջինս բաղկացած է 6 հարկերից և ունի ժամանակակից ներքին կառուցվածք, տեխնիկական հագեցվածություն, հարմարավետ դիզայն, որը թույլ է տալիս իրականացնել ամբուլատոր և ստացիոնար վիրաբուժական և ախտորոշիչ գրագետ, բացառիկ բժշկական սպասարկում:



# ԿԱՐԵՎՈՐԻ ՄԱՍԻՆ

«ԱՋԱՓՆՅԱԿ» Բժշկական Կենտրոնի հիմնական շեշտադրումը այն է, որ Կենտրոնը ունի գերժամանակից վիրաբուժական ուղղվածություն, որտեղ աշխատում են Հայաստանի լավագույն և արհեստավարժ տարբեր նեղ մասնագիտությունների վիրաբույժները, որոնց աշխատանքը զարմանալի և ներդաշնակ կերպով համադրված է Կենտրոնում աշխատող բոլոր թերապևտիկ և ախտորոշիչ առավել պահանջված մասնագետների հետ:




Բժշկական սպասարկման որակը աչքի է ընկնում նաև նրանով, որ յուրաքանչյուր պացիենտ անկախ նրանից, թե նա Կենտրոնի ներսում գործող պոլիկլինիկական շահառու է, թե արտերկրից ժամանած օտարերկրացի պացիենտ կամ սոց. փաթեթով վիրահատության դիմած այցելու, ստանում է **հավասար ուշադիր և կոմպետենտ մոտեցում:**

Գնացուցակը բոլոր ծառայությունների համար հասանելի է, իսկ ճկուն վճարման համակարգը թույլ է տալիս մեր այցելուներին օգտվել բոլոր անհրաժեշտ ծառայություններից թե՛ կանխիկ, թե՛ անկանխիկ քարտային վճարման եղանակներով, ինչպես նաև Կենտրոնում տեղադրված վճարային տերմինալի միջոցով, iDram համակարգով և ապառիկ վճարման եղանակով:




**“ԱՋԱՓՆՅԱԿ” ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԵՎԱՉԱՓ**

Find us on: facebook

ՀՀ, ք. Երևան, Աբելյան փ. 8/1
Հեռ. (010) 38-00-88, 38-00-44
www.ajapnyakmc.com

*ԱՎԵԼԻ ՔԱՆ 40 տարբեր նեղ մասնագետներ*
*300 անուն լաբորատոր հետազոտություններ*
*15 գործիքային հետազոտություններ*

Ստացվել է այնպես, որ մեկ Կենտրոնում յուրաքանչյուր պացիենտ տարբեր օտար լեզուներով և շատ կարճ ժամանակահատվածում կարող է ստանալ գրեթե բոլոր առողջական հարցերի վերաբերյալ հստակ և ճշգրիտ պատասխաններ:



## ՄԵՐ ԱՌՕՐՅԱՆ

«ԱՋԱՓՆՅԱԿ» Բժշկական Կենտրոնը ակտիվ զարգացման և դինամիկ աճի տեմպերին համընթաց նաև զարգացնում է իր ծառայությունները: Այժմ Կենտրոնում հնարավոր է կատարել տասնյակ ախտորոշիչ հետազոտություններ, առկա են գրեթե բոլոր անհրաժեշտ նեղ մասնագետները:




Կենտրոնի հիվանդանոցաշինության նորմերով նախագծված, բացառիկ ու հարմարավետ միջավայրը թույլ է տալիս պացիենտին հետազոտվել և բուժվել ժամանակակից ու մաքուր պայմաններում:






## ՄԵՐ ԱՌՕՐՅԱՆ

**Կենտրոնում ներկա պահին թերապևտիկ և պոլիկլինիկական օղակում աշխատում են՝**

- Սրտաբաններ (կատարվում է էխոկարդիոգրաֆիա, հոլտեր մոնիտորինգ, սթրես թեստավորում և այլն)




**-ՀՈԼՏԵՐ-ՏՐԵԴՄԻԼ-ԷԽՈԿԱՐԴԻՈԳՐԱՖԻԿԱ**

- Գաստրոէնտերոլոգներ (կատարվում է գաստրոսկոպիա և կոլոնոսկոպիա)
- Նյարդաբաններ (կատարվում են բլոկադաներ և ներարկումներ)
- Ներզատաբաններ
- Մաշկաբաններ (կատարվում է տրիխոսկոպիա, դերմատոսկոպիա, նաև կրիոթերապիա)
- Ակնաբույժներ (կատարվում է ավտոռեֆրակտոմետրիա և կերատոմետրիա)
- Ակնաբույժ-վիրաբույժներ (կատարվում են կատարակտի, գլաուկոմայի վիրահատություններ)
- Ընտանեկան բժիշկներ
- Մանկաբույժներ
- Թոքաբաններ
- Մանկաբարձ-գինեկոլոգներ (կատարվում է կոլպոսկոպիա, գործում է կանանց կոնսուլտացիա)

Կենտրոնում ակտիվորեն աշխատում է ցերեկային ստացիոնարի ծառայությունը, երբ պացիենտը օրվա ընթացքում բժշկի և բուժքրոջ անմիջական հսկողության ներքո, հարմարավետ պայմաններում ստանում է անհրաժեշտ բուժումը, իսկ երեկոյան վերադառնում է տուն:




Կենտրոնում կատարվում է գաստրոսկոպիա և կոլոնոսկոպիա, որոնք հնարավոր է իրականացնել նաև սեդացիայի՝ կարճատև ներերակային անզգայացման պայմաններում: